ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԴԻԱՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ

Զվարթնոցի թանգարանի հնագիտական զեկեղարաններում պահվում են 1900-1907 թթ. Խաչիկ վրդ. Դադյանի, ապա 1980-ական թթ. Զվարթնոց գաճարի հարավարեւելյան հատվածում Վարդան Հարությունյանի կատարած պեղումներից ձեռք բերված նյութերը, որոնց շրջանակներում անդրադարձել ենք Զվարթնոցի ջնարակած խեցեղենի եւ նրա արտադրության հետ կապված մի շարք հարցերի քննությանը:

Ժամանակագրորեն Զվարթնոցի ջնարակած խեցեղենը բաժանվում է Թ-Ժ, ԺԱ եւ ԺԲ-ԺԳ դարերի: Թվագրությունը կատարված է ըստ համեմատական նյութի, քանզի թանգարանում պահվող առարկաները չունեն շերտագրական տվյալներ:

Զվարթնոցի ջնարակած խեցեղեն գտածոների քննությանն անդրադարձել են մի շարք ուսումնասիրողներ՝ այն դիտարկելով հատկապես որպես զուգահեռ նյութ՝ Դվինի Թ դարի համանման նյութերի ուսումնասիրության առնչությամբ: Դվինի եւ Զվարթնոցի այդ ժամանակաշրջանի ջնարակած խեցեղենի նույնատիպությունն այնքան ակնառու է, որ հիմք է տվել որոշ գիտնականների կարծելու, թե Զվարթնոցի խեցեղենը ներմուծված է Դվինից[1]: Սակայն հետագա ուսումնասիրությունները[2] պարզեցին, որ Զվարթնոցի ջնարակած խեցեղենը էականորեն տարբերվում է դվինյան օրինակներից ինչպես կավի որակով ու գույնով, այնպես եւ զարդերի գունային ու պատկերային լուծումներով, իսկ որոշակի նմանությունները թելադրված են տվյալ ժամանակահատվածին եւ տարածքին բնորոշ մտածողությամբ ու ճաշակով:

Զվարթնոցի Թ դարի ջնարակած խեցեղենի հավաքածուն ներկայացված է ուղիղ պսակներ եւ օղակաձեւ ցածր նստուկներ ունեցող բազմագույն եւ միագույն քրեղաններով եւ թասերով: Բազմագույն նկարազարդումը կատարված է բացառապես կանաչի, դեղինի եւ շագանակագույնի համադրմամբ: Նկարազարդումը կատարված է միայն բուսական եւ երկրաչափական հարդարատարրերով, որը Թ դարի ջնարակած խեցեղենի առանձնահատկություններից է[3]: Մարդկային եւ կենդանական պատկերագրությամբ ջնարակած խեցե-

1 **Б. А. Шелковников**, Керамика и стекло из раскопок города Двина, «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հ. Դ, Եր., 1952, էջ 38: **Կ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը եւ նրա պեղումները, Եր., 1952, էջ 39:

2 **Բ. Առաքելյան,** Քաղաքները եւ արհեստները Հայաստանում Թ-ԺԳ դարերում, I, Եր., 1958, էջ 234: **Գ. Կարախանյան, Ա. Քալանթարյան,** Զվարթնոցի միջնադարյան խեցեղենը, ՊԲՀ, 1964 թ., 4, էջ 229: **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան,** Դվին II, Դվին քաղաքը եւ նրա պեղումները (1973-1980), ՀՊՀ թ. 20, Եր., 2002, էջ 80 եւ ուրիշներ:

3 **А. Л.Якобсон**, Средневековая поливная керамика как историческое явление, “Византийский временник”, 1978, том 39, с.151.

ղենը հանդես է գալիս համեմատաբար ուշ՝ փաստելով գեղարվեստական խեցեղենի վերընթաց զարգացումը: Բազմագույն ջնարակած խեցեղենն ըստ զարդանախշման բաժանվում է հետեւյալ խմբերի.

Ա) Նկարազարդում շրջանների եւ կետերի համադրմամբ. Կատարված է հիմնականում կանաչ հենքի վրա կամ կանաչ գույնի առավելությամբ (որոշ օրինակներ ունեն կաթնավուն հենք): Վառ դեղինով արված են գնդաձեւ զարդեր, որոնք շրջապատված են շագանակագույն կետազարդերով: Այս տիպի որոշ անոթների կենտրոնում նկարված երկու գծերով եւ դրանց միջեւ արված ալիքանախշով այս դեղնավուն, գնդաձեւ զարդը բաժանված է երկու կամ չորս հատվածների (աղ. I/ նկ. 1, 2, 3):

Հետաքրքիր օրինակ է կաթնագույն հենքով հատակի բեկորը՝ զարդարված կանաչ ցանցանախշով (աղ. I/ նկ. 4): Այն հարդարված է կանաչ եւ դեղին շրջաններով: Դահիպանելով գունային ներդաշնակությունը՝ դեղին շրջանները եզրագծված են շագանակագույնով: Այս օրինակի վրա կետազարդեր չկան: Հարդարման հիշյալ եղանակը ամենատարածվածն է Զվարթնոցի ջնարակած խեցեղենի հավաքածուում:

Քրեղանների զարդանախշումը կատարված է ինչպես անգոբի վրա, նույնպես առանց անգոբի: Այս հանգամանքը մեկ անգամ եւս փաստում է, որ անգոբի վրա նկարազարդումը համաժամանակյա է առանց անգոբի զարդանախշմանը:

Շրջանների եւ կետերի համադրմամբ կատարված զարդերը բնորոշ են Հայաստանի տվյալ ժամանակաշրջանի խեցեղենին[4]: Նույնը հանդիպում է նաեւ հարեւան երկրների հուշարձանների համաժամանակյա շերտերի նյութերում[5]:

Բ) **Նկարազարդում բուսանախշերով.** Խեցեղենի այս տարբերակը Զվարթնոցի թանգարանային հավաքածուում համեմատաբար մեծ թիվ է կազմում:

Զարդանախշը կատարված է կաթնագույն հենքի վրա, սակայն մուգ կանաչի գերակշռությամբ: Անոթի կենտրոնում տեղակայված շրջանաձեւ զարդից սկիզբ են առնում նշաձեւ տերեւները: Շրջանաձեւ զարդը կանաչ կամ դեղին գույնի է: Վերջինս եզրագծված է շագանակագույն կետազարդերով: Նշաձեւ տերեւները երբեմն զարդարված են դեղին գնդերով եւ գալարվող բուսազարդերով, երբեմն էլ զարդի տպավորություն ստեղծված է գունային երանգների խաղով: Ազատ մնացած ողջ տարածությունը լցված է շագանակագույն կետազարդերով եւ կանաչ բուսանախշերով: Քննարկու անոթներից առավել ուշագրավ է 109/2[Բ] համարը կրող գավաթի նստուկը, որը հատակին ունի խաչի տեսքով վարպետի նշան (աղ. II/ նկ.6/ ա,բ):

Գեղեցիկ բուսանախշերով է զարդարված կեռ խաչի պատկերով դարչնագույն հենքով քրեղանը (աղ. I/ նկ. 7): Խաչը պատկերված է շագանակագույն եւ կանաչ գծերի միջոցով՝ ընդգրկելով թասի գրեթե ողջ ներքին դաշտը: Խաչաթեւերի միջեւ եղած հատվածները զարդարված են գալարվող բուսանախշերով եւ գծիկներով: Նմանօրինակ խաչապատկերով զարդարված անոթ Հայաստանի եւ հարեւան երկրների հնավայրերից մեզ առայժմ հայտնի չէ:

Նշաձեւ տերեւներով կատարված օրնամենտը Հայաստանի Թ դ. ջնարակած խեցեղե-

4 **Ա. Քալանթարյան,** Դվինի Թ դարի ջնարակած խեցեղենի հարցի շուրջը, ՊԲՀ 1971, թ. 1, էջ 265:

5 **А. Л. Якобсон**, Художественная керамика Байлакана (Орен-Кала), МИА N 67, М-Л., 1959, с.238-239.



նի ամենաբնորոշ զարդամոտիվներից է (աղ. I/ նկ. 5, (աղ. II/ նկ. 1, 2, 3, 4, 5): Նման զարդանախշով խեցեղենի բազմաթիվ օրինակներ հայտնի են Դվինից[6] եւ Օրեն-Կալայից[7]:

Գ) Նկարազարդում ցանցանախշով եւ սլաքներով. Ցանցանախշը կատարված է շագանակագույն կամ կանաչ գույներով (աղ. III/ նկ. 2): Ցանցի չափերը տարբեր են՝ ամենամանրից՝ խոշոր: Ցանցազարդը շատ տարածված է նաեւ Դվինում: Ա. Քալանթարյանը այդ մոտիվը համարում է զուտ տեղական[8]: Համեմատաբար ամբողջական օրինակներից մեկը դարչնագույն հենքով է: Անոթի ներքին մակերեսը կանաչ գույնի գծերով բաժանված է չորս հատվածի: Հատվածներից երկուսը զարդարված են կանաչ ցանցազարդով՝ լցված շագանակագույն սլաքներով: Մյուս երկու հատվածները նախշված են կանաչավուն բուսազարդով, իսկ տերեւները ընդգծված են կետազարդերով (աղ. I/ նկ. 8):

Մեկ այլ օրինակում հենքը բաց դարչնագույն է: Անոթի դաշտը հարդարված է շագանակագույն եւ կանաչավուն ցանցազարդ համակենտրոն շրջաններով, որոնք չեն սպացվել եւ դարձել են ցայթքեր (աղ. I/ նկ. 16): Ելնելով զարդերի եւ գույների որակից՝ անոթը կարծես խոտան է: Ցանցազարդերը երբեմն լցված են ոչ թե սլաքներով, այլ կանաչ եւ դեղին պուտերով (աղ. III/ նկ.1):

Դ) Վարդյակազարդ. Նման ձեւով նկարազարդված անոթները փոքրաթիվ են: Վարդյակներն արված են կաթնագույն ֆոնի վրա: Շագանակագույն եւ կանաչ վարդյակները ելնում են թասի կենտրոնից եւ ձգվում մինչեւ անոթի պսակը: Շագանակագույն վարդյակաթերթերը զարդարված են նույն գույնի կամ դեղին գծերով, իսկ կանաչ վարդյակաթերթերը լցված են դեղնագույն ցայթքերով (աղ. III/ նկ. 5):

Հարդարման վերոհիշյալ սկզբունքները Թ դարից հետո չեն հանդիպում: Ավելի ուշ առաջ են գալիս նկարազարդման նոր միջոցներ՝ տեխնիկապես ավելի բարդ ու բազմաձեւ:

Միագույն ջնարակած խեցեղենը փոքրաթիվ է: Բոլորն էլ ջնարակած են կանաչ գույնի տարբեր երանգներով: Օրինակներից մեկը գավաթի բեկոր է: Ջնարակած է միայն արտաքին մակերեսը, որը ցածրորակ է եւ անհամաչափ: Նստուկի մի հատվածը ջնարակապատ չէ: Մյուս երկու օրինակները աղամանների բեկորներ են: Մեկը ջնարակած է անմիջապես կավի վրա առանց անգոբի, որի պատճառով գույնը խամրած է (աղ. III/ նկ. 4):

Այսպիսով, Զվարթնոցում եւս խեցեգործ վարպետները բազմագույն ջնարակի հետ միաժամանակ կիրառել են նաեւ միագույնը, որով «արդեն Թ դարում ջնարակած խեցեղենի արտադրությունը դարձել էր բազմակողմանի»[9]:

Ե) Ընդօրինակություններ. Զվարնոցի ջնարակապատ անոթների մեջ առանձին խումբ են կազմում միջագետքյան խեցեղենի ընդօրինակությունները, որոնք ունեն կաթնագույն հենքի վրա փիրուզագույն զարդեր (աղ. III/ նկ. 6,7): Պահպանված բեկորները փոքր են, որի պատճառով զարդանախշերը որոշակի չեն: Նմանօրինակ խեցեղեն հանդիպում է

6 **Н. Акопян, Ф. Бабаян, А. Жамкочян, А. Калантарян, К. Кафадарян, Г. Кочарян**, Двин IV, Город Двин и его раскопки (1981-1985гг.), АРА, N 24,Ереван, 2008, с.39: **Ա. Քալանթարյան,** Դվին I, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-1970, ՀՊՀ թ. 13, Եր., 1976, էջ 78, աղ. XXVII/1:

7 **А. Л.Якобсон**, ук.соч., с.238-239, таб.XVI/3-4.

8 **Ա. Քալանթարյան,** Կենտրոնական թաղամասի պեղումները, տեղը, թիվը, էջ 77:

9 **Ա. Քալանթարյան,** Դվինի Թ դարի ջնարակած խեցեղենի հարցի շուրջը, էջ 267:

նաեւ Դվինում[10]: Սա մեկ անգամ եւս շեշտում է Զվարթնոցի եւ Դվինի Թ դարի խեցեգործական արտադրանքի միատիպությունը:

Ինչպես Զվարթնոցում, այնպես էլ ավելի երկար պեղված եւ լավ շերտագրված հուշարձաններում Թ դարից Ժ դար ջնարակած խեցեղենի անցման փուլը առայժմ փաստված չէ որոշակի գրածոներով եւ շերտագրությամբ: Սակայն արդեն Ժ դարում ջնարակած խեցեղենը հանդես է գալիս միայն իրեն բնորոշ նկարազարդումով եւ տիպերով: Անոթների պսակները դեպի դուրս են փռվում, իսկ ցածր օղակավոր նստուկները քիչ ավելի բարձր են: Էական փոփոխությունները կապված են նկարազարդման նոր հնարանքի մշակման հետ (աղ. I/ նկ. 6): Մասնավորապես Ժ դարում ջնարակած խեցեղենի մշակույթում ի հայտ է գալիս անգոբով նկարազարդման տեխնիկան: Զվարթնոցի ժողովածուում նման տեխնիկայով նկարազարդված օրինակները մի քանիսն են: Հետաքրքիր բեկոր է անոթի նստուկը, որի վրա սպիտակ ջնարակով զարդն արված է անմիջապես կավի վրա: Այնուհետեւ անոթը պատել են բաց դեղին ջնարակով, որով եւ զարդը դարձել է ավելի ընդգծված (աղ. IV/ նկ. 1): Մեկ այլ բեկոր զարդարված է ջնարակով արված շրջաններով: Անոթը պատված է միագույն մուգ կանաչ ջնարակով, իսկ սպիտակով արված շրջանների մեջ կանաչն ավելի բաց է դարձել՝ այսպիսով երանգների խաղով ստանալով գեղեցիկ պատկեր (աղ. IV/ նկ. 3): Նման տեխնիկայով են զարդարված նաեւ մուգ դարչնագույն ջնարակած անոթի բեկորները: Այստեղ անգոբով արված զարդերի հատվածներում դարչնագույն ջնարակը համեմատաբար բաց գույն է ստացել (աղ. IV/ նկ. 2):

Ուշագրավ օրինակներից մեկը հարթ, կլորավուն նստուկ է, որը փիրուզագույն հենքի վրա կրում է շագանակագույն վեցաթեւ աստղազարդ (աղ. III/ նկ. 3): Զարդի թեւերի վրա եւ կենտրոնում արված են ցայթքեր: Վեցաթեւ աստղազարդով են գեղազարդված նաեւ Դվինից եւ Անիից հայտնի թասերից շատերը[11]: Անգոբազարդ խեցեղենի հարուստ տեսականի հայտնի է Դվինի պեղումներից[12]:

Ժ-ԺԱ դդ. նկարազարդումը շարունակում էր իրականացվել դեղինի, կանաչի եւ շագանակագույնի տարբեր երանգների համադրմամբ:

Սկսած ԺԱ դարից վառ գունազարդումը զուգակցվում է շատ թույլ, գրեթե աննկատ փորագրության հետ, որն ընդհանրապես ներդաշնակ չէ բազմերանգ գունազարդման հետ: Բազմագույն նկարազարդման դերն այստեղ գրաֆիկական նկարի առանձնացումը չէ, այլ պարզապես միտված է վառ, գույնզգույն ցայտքերով կոմպոզիցիայի ստեղծմանը: Այսպիսով, նախորդ շրջանին բնորոշ հստակ զարդաձեւերը, մասնավորապես բուսանախշերն ապիճանաբար անհետանում են, իսկ երկրաչափական զարդերը դառնում են շատ ավելի պարզ:

Զվարթնոցի ժողովածուում ԺԱ դ. ջնարակած խեցեղենի օրինակները փոքրաթիվ են՝ զարդարված փորագիր տարաբնույթ ցանցերով, զիգզագներով: Որպես կանոն՝ զարդանկարը ներդաշնակ չէ գույնին: Հաճախ նույն նկարը միաժամանակ զարդարված է տարբեր գույ-

10 Անդ, էջ 268:

11 **Ֆ. Բաբայան**, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական խեցեղենի զարդաձեւերը, Եր., 1981, էջ 30-32, նկար 23, 24: **Ե. Մուշեղյան**, Հարկանշական ցուցակ թանգարանային ժողովածուների, պրակ II, Անի քաղաքի պեղումներից հայտնաբերված առարկաները, Եր., 1982, տախ. XLI/5:

12 **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան,** Դվին II, Դվին քաղաքը եւ նրա պեղումները, էջ 92:

ներով ու երանգներով: Փորագրության տեխնիկայով ջնարակած խեցեղենը զարդարելու եղանակը, որ ԺԱ դ. կարեւոր նորամուծություններից էր, հաջորդ շրջանում դառնում է ջնարակած խեցեղենի զարդարման հիմնական ձեւը, որով բազմագույն նկարազարդումը կորցնում է իր նշանակությունը:

Ջնարակած խեցեղենի մշակույթը ամենաբարձր զարգացման է հասնում ԺԲ-ԺԳ դդ.: Այն հարստանում է նոր ձեւերով, զարդարման նոր տարբերակներով, տեխնոլոգիական ավելի բարդ հնարներով, այուժետային ու կոմպոզիցիոն բազմազանությամբ: Արտադրանքը դառնում է միատիպ՝ ելնելով շուկայի մեծ պահանջարկից: Զարդերը ևս ենթարկվում են խիստ միակերպության՝ դառնալո՝վ ավելի հստակ եւ համապատասխանեցված գույնին: Այս օրինաչափություններին հետեւում է նաեւ Ջվարթնոցի տեղական ջնարակած խեցեղենի արտադրությունը:

Թեեւ Ջվարթնոցի ժողովածուն հարուստ չէ բարդ հորինվածքային եւ տեխնիկական լուծում ունեցող օրինակներով, սակայն այնտեղ կան շատ հետաքրքիր անոթներ: Դրանք բազմագույն են՝ հարդարված փոքրագիր ոչ բարդ, երկրաչափական տարաբնույթ նախշերով, ալիքներով, պարույրներով:

ԺԳ դ. ջնարակած խեցեղենի զարդարման ամենաբնորոշ նախշերից է անոթի կենտրոնից բարձրացող ցողունը, որը վերջանում է ծաղկապատկերով: Ջվարթնոցի հավաքածուում նման ձեւով է զարդարված նստուկի մի բեկոր:

Այս շրջանում լայն տարածում գտավ միագույն ջնարակապատ խեցեղենը: Այն ներակայացված է գերազանցապես միագույն կանաչի եւ դեղինի տարբեր երանգներով, անզարդ, երբեմն էլ շատ պարզ, միատիպ հարդարված օրինակներով, որն ապահովելու էր շուկայի աճող պահանջարկը:

Հատկանշական է Ջվարթնոցի թանգարանում ցուցադրվող դուրս փռված պսակով, օղակաձեւ նստուկով, միագույն կանաչով ջնարակապատած կիսագնդաձեւ մեծ թասը (աղ. IV/ նկ. 4): Զարդերը կատարված են խորը փորագրության եղանակով: Անոթի կենտրոնից դուրս են գալիս նշաձեւ տերեւներ՝ լցված բուսական եւ երկրաչափական տարբեր նախշերով: Նշաձեւ տերեւների միջեւ արված են երկար ցողունով շուշանատիպ ծաղիկներ: Շուրթից ներքեւ՝ ողջ շրջագծով, անոթը զարդարված է գծային եւ պարուրաձեւ նախշերով: Ելնելով համեմատական նյութից[13]՝ անոթը կարող ենք թվագրել ԺԲ-ԺԳ դդ.:

Երկրորդ ամբողջական օրինակը դարչնագույն ջնարակով նկարազարդված թաս է (աղ. IV/ նկ. 5): Կենտրոնում այն ունի շրջանակի մեջ ներառած չորս պարուրաձեւ վերջավորությամբ զարդեր: Դրանց միջեւ չորս նշաձեւ զարդեր են, որոնք լցված են կրկնակի շրջաններով եւ եռանկյունաձեւ նախշերով: Նշաձեւ զարդերի միջեւ առաջացած տարածությունը ևս զարդարված է: Ամբողջ կոմպոզիցիան արված է դարչնագույնի, ցորենագույնի եւ դեղինի գեղեցիկ համադրումով: Նմանօրինակ թաս հայտնի է Դվինի միջնաբերդի 1952 թ. պեղումներից եւ Անիից[14]: Ելնելով անոթի կավի որակից, զարդարման հնարներից ու գունային

13 **Н.Акопян**, и др., Двин IV, таб.XIX.

14 **Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը եւ նրա պեղումները, II, Եր., 1982, գլխ. III/1: **Ե. Մուշեղյան**, նշվ. աշխ., գլխ. XLIII/2: Անիից հայտնաբերված օրինակի պատրաստման եւ գունազարդման եղանակին անդրադարձել է Ջ. Մայսուրաձեն. Грузинская художественная керамика XI-XIIIвв. (ангобированная керамика Дманиси), Тбилиси, 1954, с.20, ссылка1, таб.39.:

լուծումներից, ուսումնասիրողներն այն համարում են ներմուծված: Բ. Շելկովնիկովը նման անոթների արտադրության կենտրոն համարում է Աֆրասիաբը: Վերջինս Անիի օրինակը թվագրել է Ժ-ԺԱ դդ.[15]: Նկատի ունենալով, որ Դվինից հայտնի օրինակը ևս գտնվել է Ժ դ. հետո թվագրվող շերտերում, հավանական ենք համարում Զվարթնոցի անոթը թվագրել ԺԱ-ԺԲ դդ.: Նմանօրինակ խեցեղեն հայտնի է նաև Բաքվից, որն ըստ Բ. Շելկովնիկովի[16] տեղական է, ինչպես նաև Թիֆլիսից[17]:

ԺԲ-ԺԳ դդ. լայն տարածում գտան ջնարակած ձիթաճրագներն ու հարթ նստուկով, լայն պսակով աղամանները: Ճրագի ամբողջական օրինակ քննության առարկա ժողովածուում չկա: Զգալի թիվ են կազմում բերանները օրինակները, որոնք տերեւաձեւ, պոչուկավոր, ճկված քթիկով, միագույն վառ կանաչով ջնարակած ճրագներ են: Նման անոթների արտադրությունը ևս խիստ միակերպված էր, որով եւ բացատրվում է միատիպությունը այլ հնավայրերից հայտնի օրինակների հետ:

Այսպիսով, Զվարթնոցի ջնարակած խեցեղենի քննությունը հիմք է տալիս ենթադրելու, որ այստեղ եղել է ջնարակած խեցեղենի տեղական արտադրություն՝ իր որոշակի առանձնահատկություններով եւ մշտապես հաղորդակից է եղել ջնարակած խեցեղենի ոլորտում այս կամ այն ժամանակահատվածում կատարված փոփոխություններին ու ընդհանուր օրինաչափություններին:

15 **Б. А. Шелковников,** Поливная керамика из раскопок города Ани, Ереван, 1957, с.15-16.
16 **Б. А. Шелковников**., ук.соч., с.16.
17 **З. П.Майсурадзе**, Керамика Афрасиаба, Тбилиси, 1958, с.14.